

7. Second Sunday after Pentecost—Feast of Holy Echmiadzin

Proverbs 9:1-6; Zechariah 3:7-4:9; **Hebrews 9:1-10; John 10:22-30**

7. Բ. Կիրակի Հոգեգալուստէն ետք —Ս. Էջմիածնի Տօն

Առակներու 9:1-6; Զաքարիայի 3:7-4:9; **Եբրայեցիներուն 9:1-10; Յովհաննէս 10:22-30**

Եբրայեցիներուն 9:1-10

Արդարեւ, առաջին Ուխտը եւս իրեն յատուկ պաշտամունքի կանոններ եւ երկրաւոր սրբարան մը ունէր, երկու մասերէ բաղկացած: Նախ կար վրանին առաջին սրահը, Սրբութիւն կոչուած, ուր կային աշտանակը եւ առաջաւորութեան հացերուն սեղանը: Ապա, երկրորդ վարագոյրին ետին՝ կար վրանին միւս սրահը, Սրբութիւն Սրբութեանց կոչուածը, ուր կային ոսկեայ սեղանը՝ խունկ ծխելու համար, եւ Ուխտի Տապանակը՝ ներսէն ու դուրսէն ոսկեպատ: Այս Տապանակին մէջ կը պահուէին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծաղկած գաւազանը եւ Ուխտի Տասնաբանեայ Պատուիրաններուն քարէ տախտակները: Տապանակին վրայ կային Աստուծոյ փառքը ներկայացնող քերովբէները, որոնք իրենց թւերով հովանի կ'ընէին Քաւութիւն կոչուած կափարիչին վրայ: Ուրիշ մանրամասնութիւններու մասին խօսիլ չեմ ուզեր հիմա:

Սրբարանը այդպէս յարդարուած էր ուրեմն: Քահանաներ պաշտամունքը կատարելու համար մշտականօրէն կը մտնէին վրանին առաջին սրահը: Բայց երկրորդ սրահը միայն քահանայապետը կը մտնէր, տարին մէկ անգամ, այն ալ, իր եւ ժողովուրդին անգիտութեամբ գործած մեղքերուն փոխարէն՝ զոհի արիւնը մատուցանելու համար Աստուծոյ: Այդ բոլորով Սուրբ Հոգին ցոյց կու տար, թէ որքան ատեն որ վրանին առաջին սրահը կանգուն կը մնար՝ բուն Սրբարանին մուտքը մեր առջեւ փակ էր, ինչ որ խորհրդանշականօրէն ցոյց կու տայ՝ թէ ներկայիս այդ Սրբարանը բաց է մեր առջեւ: Այնտեղ մատուցուած նուէրներն ու զոհերը չէին կրնար մաքրել պաշտամունքը մատուցանողին խղճմտանքը, որովհետեւ միայն ուտելիքի, խմելիքի եւ ծիսական պէս-պէս լուացումներու կապուած էին: Եւ այդ մարմնական կարգերը ի զօրու էին մինչեւ ուղղութեան, այսինքն նոր կարգերու հաստատման ժամանակը:

Յովհաննէս 10:22-30

Ձմեռ էր. Երուսաղէմի մէջ տաճարին նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սիւնագաւիթին մէջ կ'երթեւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան Հրեաները եւ հարցուցին.

– Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըսէ մեզի:

Յիսուս պատասխանեց.

– Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այն գործերը որ Հօրս անունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ով եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ

ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, եւ ես անոնց յաւիտենական կեանք կու տամ. անոնք բնաւ պիտի չկորսուին: Ոչ որ պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ոչ որ կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք: